ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 4

№ ԲՄԱՊՁԲ-7/10-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 11 -ը սեպտեմբերի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.04.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/10-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը և և այն փաստը, որ «ԷԼԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված մսաբուսական պահածո ոլորով խյուս մսով առաջարկված միավորի գինը նվազեցնել 1 350 ՀՀ դրամի, մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով՝ 1 350 ՀՀ դրամի, մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով՝ 1 350 ՀՀ դրամի, մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով՝ 1 350 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 29 700 000 (քսանինը միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Միրաքյան 23 շին. 8
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01246073
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2019թ. ըստ եռամսյակների 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 31.10.2019թ.
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլոռով խյուս մսով)	կգ	1 350	5 500	7 425 000	5 500
2	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով)	կգ	1 350	5 500	7 425 000	5 500
3	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով)	կգ	1 350	5 500	7 425 000	5 500
4	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով)	կգ	1 350	5 500	7 425 000	5 500
Ընդհանուր գումարը՝	29 700 000 (քսանինը միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ					

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ			
		CPV-ի կոդը	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլոռով խյուս մսով)	15131632/22	7 425 000	7 425 000	7 425 000
2	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով)	15131632/23	7 425 000	7 425 000	7 425 000
3	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով)	15131632/25	7 425 000	7 425 000	7 425 000
4	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով)	15131632/26	7 425 000	7 425 000	7 425 000

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
Տնօրեն

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ